ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՐԴՈՒԻՆ ՔԱՂԱՔԻՆ

«Արդուին, Արդուինն» գոչեցինք մենք[1], սև հեռելով մեր կախարդուած հայեցուածքն՝ յանկարծ առջևնիս բացուած շնաչխարհիկ պատկերին վրայ։

Շատ չրջեցայ ես կովկասու մէջ, տեսայ շատ քաղաքներ և գիւղեր, որք իրենց գեղեցկութեամբն հիացուցին զիս և կախարդեցին. սակայն քնաւ այնքան չէի սխրացած, ինչպէս երբ Արդուին իւր բոլոր գեղեցկութեամբք զարդարուած յանկարծ առջևնիս ելաւ։

Իբրու մի գեղեցիկ նկար, առկախեալ կ'երևի յօդս Արդուին քաղաքն բարձրադիր և կիսաբոլոր ձևով քարոտ լերան վրայէն, և ամփիթատեր ձևով կ'իջնէ ձորոյն մէջ։ Անդանօր սպիտակ և գեղեցիկ տնակներն՝ որք զրեթէ լերան բուն գագաթէն սկսեալ մինչև ցստորոտն ցիրուցան սփռեալ կ'երևին կողին ամէն կողմն, չրջապատեալ բազմաթիւ պարտիզաց կանանչ գալարեօք, կը ներկայացնէին մի հակապատկեր քաղաքին չրջակայ մթին, մոխրագոյն և լերկ ժայռերուն։

Քաղաքին ծայրը յսյակողմն՝ բարձր սեպագեալ ժայռին վերայ կ'ամբառնայ մի առանձին կիսաւերակ ամրոց, որ իւր զօրաւոր և չրջակայից վրայ տիրող դրից համար երբեմն անառիկ և անմատչելի համարուած էր։

Իսկ վարը, ձորոյն յատակը կը հոսի հռչակաւոր ձորոխ գետն, մերթ իւր ճանապարհին վրայ թաւալելով ահագին քարեր, և մերթ մաքառելով և բաղմելով ժայռերուն և յետս ընկրկուելով՝ ուժգին շառաչով և դղրչալով, կորուսանելով հեռուն իւր ակունքը, հեռու աչխարհներ, Ցաճկաստանի լերանց մէջ, և խառնուելով ատ 'ի խոնարհ Սև ծովուն կապուտակ ալեաց մէջ։

Բազում մասամբք նշանաւոր է Արդուին և նորա առաւելութեանց չափ չկայ. — քաղաքին վերի մասն կը գտնուի մի բարձր դրից վրայ, ուր փութով կը հասնի գառնաշունչ ձմեռն և ուր շատ հմմտաւոտ կը սեւէ ամառն։ Որչափ դէպ 'ի վայր կը խոնարհի քաղաքն լերան մեղմիկ դարեւանդին վրայ, այնչափ ևս չրջապատող բուսականութիւնն՝ կենդանի և բարգաւաճ է։ Վերի բարձրաբերձ ասեղաց կը փոխանակեն ատ խիտ առ խիտ կաղնիք, և բազմաթիւ այգեաց մէջ կը հասունանան խաղողին հրաչալի ողկոյզքն։ Ցաք է վարը՝ լերան ստորոտը, տաք է անձիւն ձմեռուան մէջ, ինչպէս տաք է 'ի տօթագին ամիսս տարւոյ։

Կան հոս գեղձենիք, նռնենիք, և ծառաստանք ձիթենեաց, որոց արմատները կը թափանց միչտ ձորոխ իւր պղտոր կոհակներուն։ Քաղաքին այսպիսի դրից չնորհիւ՝ Արդուինի բնակիչք տարւոյն մեծ մասը կը վայելեն պարտիզաց և անդոց բազմազգի բերքերը։

Մինչդեռ լերանց գագաթներն կը հեծեն բազմակոյտ ձեան կոյտերու ներքև, մի և նոյն ժամանակ վարը ձորոխին ափանց վրայ՝ կը հասունանան բանս-

1. Սոյն հատուածս քաղեցինք Ե. Մարկով անուն ռուս Ճանապարհորդին գրքէն, որ կը կոչուի «На горахъ Араратскихъ» – Արարատայ լեռանց վրայ, յորում կան տայ մեզ այլեւայլ մանրամասն տեղեկութիւններ Անդրկովկասու կամ Ռուս-Հայաստանի նշանաւոր տեղեաց և քաղաքաց վերայ։

digitised by A.R.A.R.@

ջարդէնք և պտուղք։ Դեռ ևս օրքս չը սպառած, կը սկսին հասունանալ լերան գարևանդին վրայ գտնուածներն, և այսպէս հետզհետէ մինչև վերը, ուր ուշ ատեն աշնան ժամանակները կը սկսին բնակիչք քաղել պարտիզաց բերքերը։

Արդուինի մեծ յատկութիւնն է բազմաջուր և մեծ ճորոխ գետն, որ իւր բնական և յարմարաւոր ընթացքով կը կապէ զԱրդուին Բաթումի հետ, հետևաբար և բովանդակ քաղաքականացեալ աշխարհին հետ։

* * *

Բնակչաց բազմութեան նկատմամբ՝ Արդուին երկրորդ է բովանդակ նահանգին մէջ յետ Բաթումի, իբր 1300 տուն ունի, որով և բնակչաց թիւն՝ երկու սեռերն ևս մէկտեղ առնելով՝ 8000ը կ'անցնի։ Արդուինի ժողովուրդըն խառն է, իւր մէջ կը բովանդակէ երեք ազգութիւն, հայ, տաճիկ և վրացի։ Բաղդատմամբ բնակչաց քաղաքին եկեղեցեաց թիւն նշանաւոր է.— չորս հատ Հայ-կաթոլիկաց եկեղեցիք, մի՝ Էջմիածնական Հայոց, մի՝ Որթոդոքսաց (Ռուսաց) և երեք ևս մզկիթք։

Ուսմանց և կրթութեան ծարաւն՝ ուստի և ջանքն սկսել է թափանցել Արդուինի ժողովրդոց մէջ. և ներկայապէս վարժարանաց թիւն բաւական շատ է։ Կայ հոն Ռուսաց մի ժողովրդական ուսումնարան երկդասեան, 70 ուսանողօք. երկու տաճկական դպրոցք, որոց մէջ կ'ուսանին 67 տղայք. մէկ՝ Էջմիածնական-Հայոց, և չորս՝ Հայ-կաթոլիկաց վարժարանք, յորս կ'ուսանին 165 տղայք և 123 աղջկունք։

Արդուինի շրջանին բնակչաց գլխաւոր պարապմունք այգեգործութիւնն է, որ իրենց խիստ շահաբեր է։ Շարունակեալ ջերմ ամառուան շնորհիւ՝ բնակիչք տարին երկու անգամ՝ հունձք կը ժողվեն, և սովորաբար յետ լազուտը հնձելը՝ գարի կը սերմանեն։

Բազմաթիւ պարտիզաց մէջ՝ որ սփռուած են Արդուինին շրջակայքը և տարածուած զառիվեր լեռնակողից վերայ, կը հասուննան տեսակ տեսակ պըտուղք. խնձոր, տանձ, դեղձ, սալոր, խաղող, կաղին, թութ և ձիթապտուղ. յետինքս կը գրաւեն 20 արտավարէն աւելի տարածութիւն։

Այնքան տարածուած է աստ ձիթենեաց մշակութիւնն և այնքան առատ է ձիթապտուղն, որ տարուէ տարի Արդուինի շրջանէն դուրս կը տարուի 'ի Բաթում՝ և արտաքոյ քան զսահմանս տէրութեան մինչև 100,000 երկլիտրը. կրկին տեսակ, մին ուտելու և միւսն իւղ հանելու համար։

Բաց աստի Արդուինի մէջ կը գտնուին նաև կաշեգինաց գործատուններ, որ կը սփռեն տէրութենէն դուրս հազարաւոր այծամորթեր 'ի պատրաստութիւն թաթպանից, յորոց բազումք նորէն դառնալով 'ի Ռուսաստան՝ կը վաճառին անշուշտ եռապատիկ գնով։ Կան նաև խորոված-միս պատրաստելու մասնաւոր տեղեր, ուսկից կը տարուին 'ի Տաճկաստան կուեղէն անօթներով, գրեթէ 60,000 երկլիտր քանակութեամբ։

* * *

Արևն արդէն վաղուց վեր բարձրացել էր շրջապատող լերանց վրայէն, մինչ մենք յետ խաղաղական գիշերոյ հանգստեան՝ նոր էինք զարթել 'ի տան շրջանապետ կնեազ (իշխան) Երիստաւի, որ ամենայն սիրով հիւրընկալեցըզ-

digitised by A.R.A.R.@

մեզ իր ընդարձակ բնակարանին մէջ։ Որոշեցինք բոլոր օրն անցունել յայցելութիւն քաղաքիս նշանաւոր տեղեաց, յորում իւրաքանչիւր առարկայ՝ տեսնողին վրայ զարմացումն կ'ազդէ։

Տնէն դուրս ելնելով և փողոցայ անսովոր տեսլեամբ զմայլած, հարկ կ'ըլլար մեզ կանգ առնուլ իւրաքանչիւր քայլին։ Բոլորն ալ նեղ և ծամածուռ են, որ կամ վեր կը բարձրանան դէպ 'ի լեառն և կամ վար կը խոնարհին դէպ 'ի ստորոտն. և այնչափ զառիվեր են, որ ձին հազիւ մագլցելով կարող կ'ըլլայ վեր ելնել, որոյ համար քաղաքին մէջ բնաւ մի կառք ալ չի գտնուիր։ Մերթ ընդ մերթ կը պատահին նաև կատարեալ սանդուղներ, որոց վրայէն հարկ կըլլայ ձիով երթալ։

— «Ահա հոս Նափոլէոն իշով վեր ելաւ մինչև գագաթը», կ'երկրորդէ քեզի առաջնորդդ՝ ուսեալ բերանացի, ցուցնելով Վենետկոյ Ս. Մարկոսի զանգակատունն. և կը լսէք զայն հետաքրքրութեամբ, հիանալով հեծեալին արիութեան վրայ և կենդանւոյն ուժոյն վրայ, որ կրցեր է այնպիսի ահագին բարձրութեան վրայ ելլել։

Ոչ այս զարմանալի գործս, և ոչ ասպետի մի նկատմամբ այն հռչակուած պատմութիւնն, որ նոյնպէս կրցեր է ձիով վեր ելնել արքունի ամարանոցին երկրորդ յարկին սրահը, չեն կարող զարմացնել զանիկայ, որ տեսեր է զԱրգուին. վասն զի աստ որ և իցէ ձի ամէն անգամ մի և նոյն գործն կ'ընէ, եթէ ոչ ալ դժուարագոյնը։

Յառաջ երթալով կը զմայլէինք դիմացնիս կանգնած միջակ մեծութեամբ տան ճարտարապետութեան և գեղեցկութեան վրայ... ճանապարհին վրայ պատահած տեղացիք կը հիացնէին իւրեանց գեղեցկութեամբ, այրական և կտրիճ կերպարանօք։

Ահա ճանապարհին մէկ կողմը հետախոյզ աչօք կը նշմարէինք քարանց վրայ՝ Արգուինի կայտառ մանկանց զուարթ խումբ մը։ Ո՜հ, ի՜նչ գողտրիկ պատկերներ են սոքա, ի՜նչ պարզ և անարուեստ կերպարանք. իցի՜ւ թէ դրոշմած ըլլար զանոնք նկարիչ մը իւր տախտակին վրայ, և ես ունենայի զայն։

Յետ շրջագայելոյ տեղւոյս մեծագոյն և ամենէն աւելի նշանաւոր պարտէզներէն մին, որ տարածուած է քաղաքին միջավայրը, փափաքեցանք այցելել դղեկին աւերակաց։ Տասն վայրկենից ընթացքն բաւական եղաւ ելլելու 'ի կատար ժայռին, որոյ վերայ անպարտաս կեցած են կիսաւեր որմունքն սպառնալից և ժամանակաւ անմաշելի դղեկին։ Կեցած էինք միջակ տարածութեամբ տափարակի մի վրայ, որ երեք կողմերէն ահաւոր անդունդներով և գահավէժներով պատած էր։

Այն «Տարպէական» ժայռէս, ըստ աւանդութեան, հին ժամանակները ձորոյն մէջ կը ձգէին մահապարտ ոճրագործները, որք դեռ գետը չհասած, կ'ըսեն, կտոր կտոր կըլլային սրածայր ժայռից վերայ։

Բարեբաղդաբար այն ժամանակներն անցան գնացին և այլ ևս անդարձ են. սակայն և այնպէս սարսափ մը բերաւ վրաս այն մարդկանց բարբարոսութիւնն, երբ վար նայեցայ ներքեւս դղրդող մոլեգնեալ ձորոյն վրայ։ Ահաւո՜ր բարձրութիւն. նոյն պահուն տեսայ մարդիկ՝ որք գետոյն մեղմ դարևանդին վրայ կը շրջէին, և սողոսկող ճանճերու չափ կ'երևային։ Ո՜հ, ինչպիսի՜ սարսափելի րոպէներ՝ ունեցեր են այն թշուառ մարդիկներն՝ վար նետուած միջոցնին։

Երբ ժամը 4ին գնացինք յայցելութիւն կաթոլիկ եկեղեցիներէն մեծագունին։ Մտնելով առջևնիս բացուեցաւ եկեղեցւոյ ներքին ընդարձակու-

digitised by A.R.A.R.@

թիւնն, որ շինուածքի մասնաւոր ճոխութիւն մը չունենալով, գրեթէ բոլորովին դատարկ երեւցաւ աչքերնուս. միայն երկու երեք ջերմեռանդ պառաւունք անկիւնը առանձնացած կ'աղօթէին եռանդեամբ։ Մեր առաջնորդ քահանային հիւրասիրութեան շնորհիւ, կարողացանք տեսնել կանանց սեպհականեալ մեծ վերնատունը, ուր տեսանք ութ հատ ծնրադիր Հայ-միանձնուհիք՝ որ ծածկուած էին սպիտակ քօղով, որ մեղմիկ ճամուկներով յետուստ մինչեւ 'ի գետին կը հասնէր։ Հազիւ թէ վեր ելանք, մեր առաջնորդ քահանայն հայերէն մի քանի խօսք ըսելով անոնց, իսկոյն հեռացան։

Մենք կը խօսէինք քահանային հետ գաղղիերէն, որով հաղորդեց մեզի գեղեցիկ տեղեկութիւններ Արդուինի Հայ-կաթոլիկաց կացութեան վրայ։

Եկեղեցւոյն քով կայր նաեւ աղջկանց վարժարան մը, որոյ ուսուցիչք էին մեր տեսած միանձնուհիք. ինչպէս արդէն վերը յիշատակեցինք, յԱրդուին չորս եկեղեցի կայ եւ անոնց մէջ տասն քահանայ, որք իրենց կրթութիւնը առած են տեղւոյս վարժարանաց մէջ. իսկ մեր առաջնորդ քահանայն ուսած էր Վենետկոյ Մխիթարեանց վարժարանին մէջ, եւ ինչպէս կը տեսնուէր՝ արժանաւոր եւ գործունեայ մարդ մ'էր։

***

Նստած եմ բաց պատուհանի քով։ Վարը հովանաւոր թզենեաց, թթենեաց եւ ընկուզենեաց կանանչութեան մէջ ընկղմեալ կը տեսնուին Արդուինի սպիտակ տնակներն, որոց լուսամուտից վերայ կը ցոլան 'ի մուտս խոնարհող արեգական յետին ճառագայթներն։ Իսկ անդուստ աչքիս կը պատահէ Արդուինի միակ պանդոկն իւր սպիտակափայլ որմովք եւ անթիւ պատշգամներով։ Պատուհանիս ուղղութեամբ ճիշտ դիմացս կանգնած է գեղեցկաշէն մինարայն իւր երկնաբերձ գագաթամբ։

Թուի թէ չորս կողմէն վրաս կը նայէին բարձր եւ մթին ժայռերն, յստակ հակապատկեր մի ընծայելով աչացս՝ իւրեանց ստորոտը տարածուած դալարագեղ պուրակաց հետ։ Իսկ վարէն մերթ հողմոց թեթեւ ալիքներ ընդհատելով անուշակ եւ անդորրաւէտ լռութիւնը, կը հնչեցնեն ականջացս կատաղած Ճորոխին սոսկալի մռնչիւնը։ Եւ ահա տուընջենային լուսոյն յետին մրցման միջոց ընդդէմ գիշերային խաւարի, որ երագելով կը հասնէր, զանչեցին զանգակաց անդրադարձ ձայներ, նշանակ երեկոյեան պաշտաման կաթոլիկ եկեղեցեաց մէջ...

Որպիսի՜ չքնաղ տեսարան... դժուար է աչացս թողուլ զայն...։ Վարը գետին մռնչիւնն, շրջակայ թխատեսիլ ժայռերն, եւ 'ի խոնարհ տարածուած գեղեցիկ քաղաքն, յուշկամս իսկ կը սքանչացնեն մարդուս միտքն, միանգամայն կը զմայլեցնեն թէ զլսելիս եւ թէ զտեսանելիս։ Ո՜հ, ինչպէս բոլոր սոքա նոր են եւ բոլորն այլ գեղեցիկ։ Բնութիւնն իսկ կ'ազդէ քեզ թէ անտես եւ չնաշխարհիկ կողմեր կը գտնուիս, հեռի՜ բացակայ 'ի դաշտաց եւ 'ի մարգաց հայրենեաց...։

digitised by A.R.A.R.@